# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

# ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ , Ա. Խաչատրյան-1

09 մայիսի 2023

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՄԱՅԻՍԻ 9-Ի՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ջերմորեն շնորհավորում եմ մայիսյան եռատոնի՝ Մեծ հայրենականում հաղթանակի, Շուշիի ազատագրման և Արցախի բանակի ստեղծման օրվա առթիվ: Մեծ հայրենականում տարած հաղթանակը և Շուշիի ազատագրումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակներն են: Մայիսի 9-ը հաղթանակի և խաղաղության օր է: Տոն, որ ծնունդ առավ Հայրենական մեծ պատերազմում բազմաթիվ մարդկանց հերոսությամբ ու սխրանքով, զրկանքներով ու այրամբ տարած հաղթանակից: Խոնարհումս հայրենական պատերազմի տարբեր ռազմաճակատներում կռված ու հաղթանակներում իրենց ավանդներն ունեցած հազարավոր հայորդիների առջև: Մայիսի 9-ը թող մեր ազգի համար համախմբվածության և արժանապատվության խորհուրդ ունենա:

Սիրելի՛ հայրենակիցներ, կրկին շնորհավորում եմ բոլորիս այս պանծալի հաղթանակների առթիվ: Հավերժ փա՛ռք այս հաղթանակների ձեռքբերման ճանապարհին ընկած մեր հերոսներին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂԱԶԱՐՅԱՆ**